Աշխատանքի ծածկագիր 88456

ՈՐՈՇՈՒՄ

ք. Երևան

17.12.2024թ.

Բողոքարկման հանձնաժողովը հետևյալ կազմով՝
Նախագահությամբ՝ Ալեքսանդրա Հարությունյանի
Մասնակցությամբ անդամներ՝
Անի Հարությունյանի
Քրիստինե Ալեքսանյանի

քննության առնելով վարչական մասնագիտացման դատավորների թեկնածուների ցուցակի համալրման նպատակով անցկացվող որակավորման գրավոր քննության արդյունքների դեմ բերված բողոքը.

ՊԱՐԶԵՑ

Բողոքարկվել են տարբերակ 4-ի վարչական իրավունք բաժնի 16-րդ, 17-րդ, 23-րդ, 43-րդ, 44-րդ և 47-րդ հարցերը:

Հարց 16

Վիճարկման արդյունքում գնահատականը թողնվել է անփոփոխ, քանի որ Բարձրագույն դատական խորհրդի 17.09.2024 թվականի թիվ ԲԴԽ-85-Ո-173 որոշման 2-րդ հավելվածի 32-րդ կետի համաձայն՝ հավակնորդներին արգելվում է գրավոր աշխատանքում գրել իրենց անունը կամ կատարել որևէ այլ նշում, որը կարող է անհատականացնել գրավոր աշխատանքը, իսկ հարցը սխալ նշելու հետևանքով կատարած ջնջումի դեպքում տվյալ հարցը միավոր չի ստանում:

Հարց 17

Վիճարկման արդյունքում գնահատականը թողնվել է անփոփոխ, քանի որ առաջադրանքով ներկայացված խնդրի վերաբերյալ առկա է նաև Սահմանադրական դատարանի 07.11.2017 թվականի թիվ ՍԴՈ-1383 որոշումը, որով Սահմանադրական դատարանն ուղղակիորեն արձանագրել է, որ հիմնարար իրավունքների խախտման դեպքում ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասը ենթակա է հատուցման՝ անկախ

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 104-րդ հոդվածի 1-ին մասի ձևակերպումից:

Հարց 23

Վիճարկման արդյունքում գնահատականը թողնվել է անփոփոխ, քանի որ առաջադրանքով ներկայացված խնդրի միակ միանշանակ ճիշտ պատասխանը 1-ինն է:

Հարց 43

Վիճարկման արդյունքում գնահատականը թողնվել է անփոփոխ, քանի որ վարչական վարույթը կասեցնելու մասին որոշումը վարչական վարույթի ընթացքում ընդունվող ընթացակարգային փաստաթուղթ է, վարչական ակտ չէ, հետևաբար ենթակա չէ բողոքարկման:

Հարց 44

Վիճարկման արդյունքում գնահատականը թողնվել է անփոփոխ, քանի որ առաջադրանքով ներկայացված խնդրում անձին իրավունքի տրամադրումից բացի սահմանվել է նաև վարձավճար վճարելու լրացուցիչ պարտավորություն, որի պայմաններում վարչական ակտը զուգորդվող է:

Հարց 47

Վիճարկման արդյունքում գնահատականը թողնվել է անփոփոխ, քանի որ առաջադրանքով ներկայացված խնդրի կապակցությամբ կիրառելի է Վճռաբեկ դատարանի 30.04.2015 թվականի թիվ ՎԴ/1567/05/12 վարչական գործով որոշումը, որով Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ապրանքային նշանի գրանցմանն ուղղված վարչական վարույթի նկատմամբ վարչական վարույթին երրորդ անձանց մասնակցության վերաբերյալ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի ընդհանուր իրավակարգավորումները կիրառելի չեն:

Հարց 50

Վիճարկման արդյունքում գնահատականը թողնվել է անփոփոխ, քանի որ առաջադրանքով ներկայացված խնդրի կապակցությամբ կիրառելի է Վճռաբեկ դատարանի 22.04.2016 թվականի թիվ ՎԴ/2659/05/14 վարչական գործով կայացված որոշումը, որով արձանագրվել է, որ Երևանի քաղաքապետի խորհրդականի գրությունը տեղեկատվական բնույթ ունեցող փաստաթուղթ է, ուղղված չէ որևէ անձի համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն, ուստի վարչական ակտ չէ:

ՈՐՈՇԵՑ

Թիվ 88456 ծածկագրով աշխատանքի քննության արդյունքների դեմ բերված բողոքը ամբողջովին մերժել: Վարչական իրավունք բաժնի ընդհանուր միավորը թողնել անփոփոխ:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ք. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ